«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքի իրականացումը «Պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝Էլիզիթ Սիմոնյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ Մրգավանի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Դասի արդյունավետության բարձրացման մեթոդները
3. Գործնական աշխատանքի կիրառության նշանակությունը պատմության դասերի
4. Դասի պլան
5. Եզրակացություն
6. Օգտագործված գրականության ցանկ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ի սկզբանե հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավական: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը; Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները: Ուսուցման մեթոդներն ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները և կարողունակությունները: ՈՒսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբերի: ՈՒսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից: Լ. Վիգոտսկին գրել է «Մեկ մշակույթում երեխայի սովորելու բնականոն զարգացումը նույնը չէ, կամ կիրառելի է այլ մշակույթներում կամ հասարակություններում ապրող երեխաների համար»:

Ուսուցման ամենատարածված ձևերն ու ակտիվ մեթոդներն են պատմության դասին՝

1. Պատմել /դասախոսություն/

2.Բացատրություն-վերլուծություն

3.Թեստային աշխատանք

4.Աշխատանք դասագրքով և լրացուցիչ գրքով / սկզբնաղբյուր/

5.Զրույց-Բանավեճ-Հիմնավորում

6.Համակարգիչով դասի անցկացում/պրեզենտացիա/ և նյութերի ցուցադրում

7.Դասի մոդելավորում կամ սխեմայի կազմում/ քարտեզագրում/

8.Գրավոր աշխատանք-համառոտագրում

9.Գործնական աշխատանքներ

10.Ինքնուրույն աշխատանքներ

11.Վարժություններ/ աղյուսակներ, Վենի դիագրամմա, T-աձև և M -աձև աղյուսակներ և այլն/

12.Խմբային աշխատանք

13.Ցուցադրում-իլյուստրատիվ մեթոդ

14., Դերային խաղ,

15.Դասի կրկնություն

Պատմության դասավանդման ընթացքում մեթոդական ինչպիսի միջոցներ էլ կիրառվի կարևոր է ուսուցչի բանավոր խոսքը, շեշտադրությունը , ներկայացման ձևը: Պատմության դասաժամերի ընթացքում պետք է աշակերտի մոտ ձևավորվի հայրենասիրություն, ազգային դաստիարակություն, պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումներ, հիմնախնդիրների վերաբերյալ վերհանում և վերլուծություն: Հայոց պատմությունն առարկան տալիս է հայեցի մտածելու կարողություն, դաստիարակում է հայրենասիրություն:

«ՈՒսուցման ձևերն ու մեթոդները ի վերջո հանգում է երեխայի ուժերի ու հետաքրքրությունների զարգացման հարցին»:

/Ջոն Դյու/

Մեթոդիկայի հիմնական խնդիրը սովորեցնելն է՝ կոնկրետացնում է ուսուցչի աշխատանքը ըստ դասարանների և դասերի: Պատմական նյութի բովանդակությունից ելնելով՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, ուսուցիչը ընտրում է դասավանդման ձևեր ու մեթոդներ, հնարներ դասի արդյունավետությունը բարձրացնելու, գիտելիքների հաղորդման ու աշակերտների հեշտ յուրացման համար:

1.ԴԱՍԻ ԱՐԴՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

1/. Պատմության նկատմամբ աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի աշխատանքը սկզբնաղբյուրների հետ: Բացի բուն դասագրքային դասից ուսուցիչը կարող է հանձնարարել նաև ընթերցել հատվածներ պատմական այս կամ այն սկզբնաղբյուրից: Սկզբնաղբյուրներ են համարվում պատմական նամակները, լուսանկարները, թերթային կամ գիտական հոդվածները, պատմական փաստաթղթերը: Դպրոցական դասագրքում ևս կան հատվածներ սկզբնաղբյուրներից, պատմիչների աշխատություններից: Օրինակ՝ <Արշակունիների մայրամուտը> դասը անցնելիս նպատակահարմար է օգտագործել Ղազար Փարպեցու սկզբնաղբյուրները, կամ՝ Մ. Խորենացու, Ձիրավի ճակատամարտի մասին նյութը Պապ թագավոր դասը ուսուցանելիս /7-րդ դասարան/ և այլն: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից, ուղղակիորեն առնչվել պատմական այս կամ այն նյութին: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել, որպես դասագիրքը լրացնող միջոցներ: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտություն, ձևավորում աշակերտի մոտ կարծիք-բանավեճ: Շատ հաճախ դասագրքերը մատուցում են պատրաստի գիտելիք: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է դասագրքերին այլընտրանք ունենալու, դրանց լրացնելու իմաստով:

2./ Պատմության դասաժամին նպատակահարմար է կատարել նաև խմբային աշխատանք ելնելով թեմայից ու պատմական դեպքերից:

Դասարանը բաժանել 4- հոգանոց տարասեռ խմբերի ու յուրաքանչյուր խմբի բաժանել թերթիկներ, որոնց վրա գրված են հարցեր ելնելով ուսումնասիրվող պատմական դեպքերից: Յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է պատասխանը, վերջում կատարվում է վերլուծությունամփոփում: Անհրաժեշտ է խմբային աշխատանքի մեջ ներգրավել բոլորին և հարցումներ անել բոլոր աշակերտներին: Նոր դասի հաղորդումը նույնպես կարելի է կատարել խմբային աշխատանքով կապելով անցածի հետ: Դասը բաժանել խմբերին ըստ պարագրաֆի ենթակետերի և հետո կատարել հարցումներ: Աշակերտները այսպես գրեթե լիովին սովորում են դասը դասարանում: Խմբային աշխատանքի ժամանակ ուսուցիչը ուղղորդում և ամրապնդում է սովորածը: Խմբային աշխատանքի ընթացքում սովորողներն առիթ են ունենում որոշումներ

կայացնել, պատմական հիմնախնդիրներ վերլուծել, կարծիք արտահայտել, բանակցություններ վարել այլ խմբերի հետ:

3/ Խմբերի հետ պատմական նյութից ելնելով հնարավոր է կազմակերպել դերային խաղ: Դերային խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ ունեցող թեմաներ, մասնակիցները կարող են ներկայացնել պատմական որևէ տարբեր տեսակետներ ունեցող դերեր: օրինակ հայոց թագավորների, սպարապետների կերպարներ,պատմական որևէ ժամանակշրջան: Դերային խաղը կարելի է կազմակերպել փոքր խմբերով, հետո կատարել վերլուծություն քննարկում դասարանում: Թե՝ «Հայոց պատմության» և թե՝ «Համաշխարհային պատմության» դասավանդման ու ուսուցման մեթոդների մեջ մեծ դեր ունի ուսուցչի կենդանի, արտահայտիչ խոսքը, դասի մատուցման ձևը, որը արտահայտվում է տարբեր ձևերով պատմում, դասախոսություն, զրույց, պատմական փաստաթղթերի բարձրաձայն ընթերցում, արտասանություն: Վերը թվարկված այս ձևերը միավորվում են բանավոր ուսուցման մեթոդների խմբի մեջ:

ՏՀՏ-ների ԿԻՐԱՌՈՒՄ 4./Պատմության դասաժամին կարևոր է նաև ուսուցման դիդակտիկ մեթոդների կիրառումը, այն է համապատասխան նկարների ու քարտեզների օգտագործում, ինչպես նաև տեխնիկական միջոցներիայն է դիաֆիլմերի ու մագնիտոֆոնային ձայնագրությունների կիրառում և իհարկե

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ տեխնիկայի օգտագործում, որը շատ արդյունավետ է և ունի լայն ու բազմաբովանդակ հնարավորություն: Համակարգիչով ցույց է տրվում և դասի վերաբերյալ նկարներ , և պատմության տարեթվեր, անգամ որևէ հատված պատմական այս կամ այն դեպքերից ու իրադարձություններից սլայդների ձևով:/ պրեզենտացիա/: Կարևոր է նաև համակարգիչով պատմության դասի վերաբերյալ որևէ ֆիլմի դիտումը:

5 ԹԵՍԹ / Թեստ/ անգլերեն նշանակում է փորձարկում կամ ստուգում/, որը նախատեսված է չափորոշիչների համապատասխան սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափման և արդյունքները մեկ կամ մի քանի հատուկ նպատակներով օգտագործելու համար: Սովորողների առաջադիմության ստուգման համար տրվում են թեստեր կիսամյակի վերջում, ուսումնական տարվա ավարտին կամ յուրաքանչյուր թեմայի ուսուցման վերջում՝ ստուգելու համար նյութի յուրացման մակարդակը և աստիճանը: Այդ թեստերը լինում են կիսամյակային ամփոփիչ, տարեվերջյան ամփոփիչ և ուսուցանվող/ձևավորող/ թեստեր:

Պատմության դասի յուրացման ամրապնդման համար կարևոր է օգտագործել ուսուցչի կողմից կազմված կամ արդեն առկա թեստային առաջադրանքներ, որոնք ընդգրկում են պատմական կարևորագույն դեպքերն ու թվերը և քաղաքական գործիչների անունները, դասի թեմաներ և այլն:

Օրինակ 1.Ինչ են հիշեցնում այս թվերը. 387 961 1045 և այլն:

2.Լրացնել բաց թողածը. 1794թ Հնդկաստանի ------ քաղաքում լույս տեսավ հայերեն առաջին տպագիր թերթը <<----------->> որի հրատարակիչն էր----------:

Կարևոր է կիրառել հայտորոշիչ թեսթ ստուգելու համար, թե ինչպես է յուրացրել այս կամ այն դասը աշակերտը, հետագայում ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով: Թեստերը կազմելիս ուսուցիչը պետք է իմանա թե ինչ նպատակ է հետապնդում, ինչ թեմաներ և ենթաթեմաներ է ընտրում, որն է թեստի բովանդակությունը, այն պետք է բխի պատմության դասավանդման չափորոշիչից, ծրագրից ու ժամաքանակից: Թեստային աշխատանքի կատարման տևողությունը կարող է լինել օրինակ՝ 20 րոպե, 45 րոպե կամ 90 րոպե և այլն: Թեստերը կարող են լինել տարբեր բարդության՝ ունենալով հեշտ, միջին և մեծ բարդության հարցեր ու առաջադրանքներ: Թեստերի բարդության աստիճանը որոշում է ուսուցիչը ՝ ելնելով աշակերտների գիտելիքներից, կարողություններից ու հմտություններից: Այն կարելի է տալ 2-3 տարբերակներով թույլ աշակերտներին ավելի պարզ ու հեշտ թեստեր, իսկ ուժեղ սովորողներին մեծ բարդության և այլ տիպի թեստեր:

6. Դասագրքով աշխատելիս աշակերտը ոչ միայն պետք է կարողանա վերարտադրել կամ սերտել ուսուցվող թեման, այլև ցանկալի է որ նա համադրի դեպքերն ու փաստերը, ստեղծի կապ անցածի ու ներկայի հետ: Ուստի անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել կազմել տրամաբանական սխեմա/ մոդուլ, դիագրամմա, աղյուսակ և այլն/ ու ինքնուրույն համառոտագրություն տետրում:

7.Շատ կարևոր է որ աշակերտները անպայման ունենան պատմության տերմինների, հասկացությունների տետր, որով ամրապնդվում է նոր դասի յուրացումը:

8.Շատ կարևոր է , որ ուսուցիչը դասարանին կամ աշակերտների որոշակի խմբի հանձնարարի կազմել ցուցապաստառներ /պլակատ/ պատմության որևէ թեմայի վերաբերյալ: Դա նպաստում

է աշակերտների համագործակցային աշխատանքին, տալիս սովորողներին ինքնուրույն մտածելու, գիտելիքները խորացնելու հնարավորություն:

9.Անհրաժեշտ է նաև աշակերտներին հանձնարարել գրել ռեֆերատներ պատմության թեմաներով՝ օգտագործելով և գրքերը և նաև համացանցը: Օրինակ՝ուսումնասիրվող դասի շուրջ գրել ռեֆերատներ: Դա տալիս է աշակերտներին ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, դասագրքից դուրս ավելի լայն գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն: Թեստային առաջադրանքները, ինքնուրույն գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքը, վարժություն-սխեմաները միավորվում են ուսուցման գրավոր մեթոդների մեջ:

10. Բարձր դասարաններում պատմության ուսուցման համար կարելի է կիրառել պարապմունքներ սեմինարների ձևով՝ նախագծային մեթոդի օգնությամբ: Դա կապված կարող է լինել պատմության հիմնահարցերի հետ: Ուսուցիչը հայտնում է նախապես որոշված դասի թեման ինքնուրույն պատրաստվելու համար, ինչպես նաև տալիս է հիմնական հարցերն ու գրականությունը: Պարապմունքների ընթացքում քննարկվում է առաջադրված թեման ու հարցերը, լսում աշակերտների առանձին հաղորդումները, իսկ վերջում ուսուցիչը ընդհանուր եզրակացություններ ու բացատրություններ է անում թեմայի շուրջ: Լիովին հնարավոր է և նպատակահարմար է առավել պատրաստված և առարկայով հետաքրքրվող աշակերտներին տալ անհատական առաջադրանքներ: Թույլ աշակերտներին նույնպես կարելի է տալ անհատական առաջադրանքներ, բայց այն պետք է լինի ավելի պարզ ու թեթև ելնելով աշակերտի ընդունակություններից: Աշակերտների պատմողական և բանավոր խոսքի շարադրման համար կարևոր է նաև լրացուցիչ գրականություն և արտադասարանային ընթերցանություն կազմակերպելը: Պատմական որևէ ժամանակաշրջանի հետ կապված գեղարվեստական գրքերի ընթերցումը նպաստում է աշակերտների զարգացվածությանը, պատմական դեպքերի ավելի մատչելի ընկալմանը: Ուսուցիչը դրանով կիրառում է դասընթացի ընթացքում միջառարկայական կապերը գրականության հետ: Պատմության դասի ժամանակ քարտեզների օգտագործումը ոչ միայն միջառարկայական կապ է աշխարհագրության հետ, այլ նաև ավելի պատկերավոր է դառնում աշակերտներին պատմական վայրերը, քաղաքները ու ճակատամարտերը, դյուրացնում քարտեզի միջոցով աշակերտի պատկերացումները և հեշտացնում դասի ընկալումը:

11. Դասապրոցեսից դուրս ուսուցման ակտիվ մեթոդներ կարող են լինել մրցույթ-վիկտորինաները, միջոցառումները նվիրված պատմական որևէ թեմային կամ Հայաստանին, էքսկուրսիաները և արշավները Հայաստանի պատմամշակութային վայրերով:

12. «Հայոց պատմության» և «Համաշխարհային պատմության» որոշ թեմաներ նպատակահարմար է անցնել միաժամանակ՝ կիրառելով բազմաթիվ մեթոդներ և օգտագործել միջառարկայական կապերը: Օրինակ՝«Առաջին աշխարհամարտը և Կովկասյան ճակատը» թեման անհրաժեշտ է զուգորդել «Առաջին աշխարհամատի սկիզբ, ընթացք, ավարտ» դասընթացի ժամանակ ուսուցանվող թեմայի հետ և այլն: Արդի տեղեկատվական հասարակության պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար անհրաժեշտ է յուրացնել և ներդնել ուսուցման նորարարական տեխնոլոգիաներ, հատկապես դասի ժամանակ համակարգչային տեխնիկայի կիրառումը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը, պատմական դեպքերի ու փաստերի ցուցադրումը համակարգիչով/ ֆիլմ, պրեզենտացիա-սլայդ/ ավելի հետաքրքիր է դարձնում դասը: Այն լինում է մատչելի անգամ դասարանում թույլ սովորող աշակերտների համար: Յուրաքանչյուր դաս ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների արդյունավետ իրականացում: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է, չափորոշիչային պահանջներին համապատասխանեցնելը, ուղիների, մեթոդների ու հնարների ճիշտ ընտրելը, դասի մատուցումը և ժամանակի մեջ տեղավորվելը:

Դասը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. խթանում, իմաստի ընկալում և կշռադատում / ԽԻԿ/: Դասի խթանման փուլի ակտիվ մեթոդներ են

- Մտագրոհ
- Պրիզմա
- Հարցեր
- Համառոտ զրույց և այլն

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

ա/ Նախապատրաստել սովողներին նոր դասի ընկալմանը, դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միրոցով հատկապես երբ նոր դասը հնի շարունակությունն է;

բ/ բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները;

գ/Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ;

դ/ աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում;

Դասի նախապատարաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով; մտագրոհ մեթոդ Դասի խթանման փուլի Մտքերի տարափը կամ մտագրոհը սովորողների աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է; դրա գլխավոր գործառույթը մտքերի գեներեցիան է; Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում քանի որ խրախուսվում է հաճախ պարզապես ուսումնասիրվող 8 նյութի հետ այս կամ այն կերպ առնչվո բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը; Դասարանի աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում նրանցից յուրաքանչյուրյ արտահայտում է սեփական տեսակետները առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի; Բոլոր մտքերն ու գաղափաարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա; Ավելին պատկերավոր բնութագրելու համար երբեմն ասվում է որ <> մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարները ընդունելի են << սխալ >> չկա; Մտագրոհը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը; Նշենք որոշ հանգամանքներ՝ մեթոդը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն; Դասի իմաստի ընկալման փուլի ժամանակ կիրառելի մեթոդներ կարող են լինել

- Վենի դիագրամա
- Աղյուսակների կազմում/ Տ-աձև, Մ-աձև/
- Խճանկար
- Ապագայի անիվ
- Համառոտ դասախոսություն կամ պատմել

• Զրույց

• Խորանարդում և այլն Դասի կշռադատում փուլի ժամանակ նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները.

• Քառաբաժան աղյուսակ

• Գաղափարների քարտեզագրում

• Թեստեր

• Հարցեր ու պատասխաններ , ամփոփում և այլն: քառաբաժան աղյուսակ Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս;

Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կա փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս; Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ բաժանելով 4 մասի; Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից 9 յուրաքանչյուրում; Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոփոխել; Կարելի է իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները / օրինակ ըստ Բլյումի դասակարգման/;

ինչ գիտեի ?	ինչ իմացա ?
ինչպես կարող եմ օգտագործել?	ինչ եզրակացություն արեցի

Քառաբաժան աղյուսակի վերը նշված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել ըստ համարակալման; Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ամբողջ թիմին; Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է ամբողջ դասարանին; Հնարավոր է որ ըստ ուսումնասիրվող նյութի կարևորվի տեքստի պատմվածքի կամ նյութի դիտարկումը որոշակի տեսանկյունով;, ինչը կնպաստի, որ

հատկապես ուշադրություն դարձվի քառաբաժանի այս կամ այն հատվածի գրառումների վրա, որոնք հատուկ պետք է առանձնացնել ներկայացնել և քննարկել; Հարկ է նշել որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասի կշռադատման փուլում; Ներառական կրթության համար նույնպես կիրառելի է քառաբաժան աղյուսակը գունային տարբեր ձևերով; Ամեն մի գույնի աղյուսակի մեջ Ներառական կրթություն ստացող աշակերտը կարող է գրել իր սովորածը պատմական թիվը պատմական անունը, իր հասկացածը; ԿԱՊԿՈՒ կրթություն ստացող երեխաների համար առավել մատչելի է պատմության դասը տանել աղյուսակների սխեմաների միջոցով; Ցանկացած դաս-ուսուցում և մեթոդների կիրառում տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները , կարողությունները: Այս տեսակետից հետաքրքիր է Բենջամին Բլումի առաջարկած ուսուցման դասակարգումը: Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ: Նոր գիտելիքները դարձնում է կիրառական, գնում դեպի գիտելիքների խորացում ու վերլուծություն: Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռք բերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Աշակերտի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով նա կարող է դրանք կրիառել: Այդ գիտելիքների կիրառությունների կարողությունները և հմտությունները զարգացնելու նպատակով նախատեսվում են գորխնական աշխատանքներ: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից՝ գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղայնքում կողմնորոշվելու, գործիքներով աշխատելու կարողություններ, լաբորատոր պայմաններում փորձ, տեսական կիրառություններ կամ մոդելավորում, մակետների կազմում և նոր տեխնոլոգիաների յուրացում և այլն: Կիրառություններից առանձնահատուկ արժեք ունի միջառարկայական կապերի խթանումը: Այս աշխատանքները կարող են արվել և՛ դասաժամի ընթացքում, և՛ դասից դուրս:

Ուսուցանող գնահատման ուղղությամբ արվող աշխատանքների արդյունավետությունը կարելի է պարզել միավորային ու նախագծային աշխատանքների հիման վրա, դրանց դինամիկայի և համեմատական վերլուծությունների միջոցով: Ուսուցանող գնահատման համար կարելի է օգտագործել խրախուսական միջոցներ, բայց առավել կարևոր են մեկնաբանությունները:

Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնառության բարելավումն է, ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում: Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորմանը, իրականացման և վերլուծության փուլերին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել:

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևերը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝

վերարտադրողական, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը /օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն/

մասամբ որոնողական, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրները /օինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա/

ստեղծագործական, երբ սովորողը ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդիրների համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ/ օրինակ՝ կազմել տեղայնքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ/:

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքների շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրերում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

4.ԴԱՍԻ ՊԼԱՆ

Նպատակահարմար եմ գտնում ներկայացնել դասի տարբեր փուլերում կիրառվող մեթոդների ընտրությունը մեկ դասի օրինակով:

Առարկա՝ Հայոց պատնություն

Դասարան՝8 -րդ

Թեմա՝ Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները

Նպատակը և խնդիրները.

Իմանա՝ թուրք-պարսկական տիրապետության դեմ հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի կազմակերպման և ապագա հայկական պետականության ձևի ու կառավարման վերաբերյալ Մադրասի խմբակի և հնդկահայ գործիչների ծրագրերի մասին, իմանա 18-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության խնդիրը բարձրացրած գործիչներ Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի և մյուսների կյանքի ու գործունեության մասին, գաղափար ունենա «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» աշխատությունների մասին:

Կարողանա՝

.համեմատել հայոց ազգային ազատագրական պայքարի խաղաղ և զինված դրսևորումների դրվագները, վերլուծել Հայաստանի ազատագրության Հարավային ծրագիրը, այն համադրել նախորդ շրջանի ծրագրերի հետ, բնութագրել ազատագրական շարժման գործիչներին: .գիտակցել ազատագրական պայքարի դերն ու նշանակությունը հայոց պետականության վերականգնման գործում.

. գնահատել ազատագրական պայքարի ականավոր գործիչներին և նրանց գործունեությունը
.արթնացնել հայրենասիրական բուռն զգացմունքներ
.արժևորել հնդկահայ գաղթօջախի և գործիչների ներդրումը ազատագրական պայքարի այդ փուլում

Վերջնարդյունքում՝

.զարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը

. ընդլայնել նրանց մտահորիզոնը

. հարցադրումների միջոցով կենտրոնացնել նրանց ուշադրությունը

. նպաստել նրանց կամքի և համառության զարգացմանը

Հիմնական հասկացություններ և առանցքային գաղափարներ

Մադրասի խմբակ, սահմանադրական հանրապետություն, «Հայոց տուն», փոխանորդներ, Հայաստանի ազատագրության հնդկահայ կենտրոն, համաժողովրդական ապստամբություն, Շահամիր Շահամիրյանի ծրագիրը որպես պետականության վերականգնման գաղափարի զարգացման նոր փուլ:

Ուսումնադիտողական պարագաներ

Դասագիրք, պատմության տետրեր, քարտեզ, նկարներ, աղյուսակներ, հատվածներ «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ», «Որոգայթ փառաց» աշխատություններից:

Ներառարկայական և միջառարկայական կապեր

Հայոց պատմություն / 7-րդ դասարան/, Հայոց եկեղեցու պատմություն /6-րդ դասարան/, Նոր պատմություն /7-րդ դասարան/

Դասատիպեր

Նոր նյութի ուսումնասիրում, գործնական պարապմունք

Ուսուցման մեթոդներ, հնարներ

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ, էվրիստիկ զրույց, մտագրոհ, Վեննի գծապատկեր, աղյուսակ, ինքնուրույն աշխատանք

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Դասը սկսվում է հնդկահայ գաղթօջախի մասին ուսուցչի ներածական զրույցով: Աշակերտները հետևում են ուսուցչին և փորձում առանձնացնել նրա խոսքում շեշտված ամենակարևոր միտքը: Այնուհետև անց է կացվում մտքերի համադասարանական գեներացիա՝ մտագրոհ, «մտքերի տարափ» համաժողովրդական ապստամբություն գաղափարի շուրջ:

Մտագրոհ



Գրառվում են համաժողովրդական ապստամբությանը վերաբերող աշակերտների բոլոր բառերն ու արտահայտությունները: Ուսուցիչը հնարավորություն է տալիս արտահայտելու բոլոր ցանկացողներին: Եթե որևէ մեկը դժվարանում է մտքերը հստակ արտահայտել, ուսուցիչը կարող է օգնող հարցեր տալ, հուշել անհրաժեշտ բառը: Այնուհետև կատարվում է գրառված բառերի խմբավորում և մտքերի փոխանակում, որից հետո դասարանը բաժանվում է 5-6 խմբերի, և աշխատանքը շարունակվում է համագործակցային փոքր խմբերով: Խմբերն ընթերցանության միջոցով ծանոթանում են «Մադրասի խմբակի գործունեությունը» հարցի բովանդակությանը, առանձնացնում կարևոր մտքերն ու գաղափարները, հազմակերպում քննարկում: Ապա ուսուցիչը խմբերին բաժանում է «Որոգայթ փառաց» գրքից հետևյալ փոքր հատվածները.

- Հայաստանի կառավարությունը պետք է կազմվի հորվարտակով՝ Հայոց տնից, համաձայն հայկական օրենքների:
- Հայաստանի նախագահը պետք է լինի բուն հայոց ազգից և հայկական եկեղեցու դավանությամբ:
- Հայոց տունը ճանաչելու է Ռուսական կայսրությանը՝ որպես իր ազատարարի գերությունից և մնալու է կայսեր բարեկամներին՝ բարեկամ և թշնամիներին՝ թշնամի; Եվ մեծ կայսրն էլ պետք է սիրի Հայաստանի բարեկամներին և ատի թշնամիներին:
- Ռուսաց կայսրությունը ճանաչելու է Հայոց Տունը՝ որպես Հայաստանի թագավորի, որի մեծ դեսպանը՝ Հայոց Բերանը, նստելու է Պետերբուրգում:

Սկզբնաղբյուրի հետ արդյունավետ աշխատելու համար շատ կարևոր է աշակերտների ուշադրությունը հրավիրել որոշ կողմնորոշիչ հարցերի վրա: Ստորև ներկայացնեմ մի քանի հարցեր՝

1. Ի՞նչ փաստաթուղթ է սա
2. Ե՞րբ է այն ընդունվել
3. Ովքե՞ր են սկզբնաղբյուրի հեղինակները
4. Սկզբնաղբյուրի հեղինակը չեզոք է, թե ունի որոշակի շահագրգռվածություն
5. Ինչո՞ւ է այս փաստաթուղթը կարևոր
6. Նշեք երեք խնդիր, որ կարևորվում է սկզբնաղբյուրում
7. Նկարագրեք, թե ինչպես վերլուծեցիք փաստաթուղթը
8. Նշեք սկզբնաղբյուրի 2-3 միտք, որոնք կարևոր են և այժմեական

9. Ի՞նչ հարց կուզեիք տալ սկզբնաղբյուրի հեղինակներին

Աշխատանքներն ավարտելուց հետո ուսուցիչը կազմակերպում է խմբային քննարկում:

Հասկացություն Աշխատություն	Պետության տիպը	Կառավարման ձև	Օրենսդիր մարմին	Գործադիր մարմին

Տնային առաջադրանքների տարբերակներ

- Կազմել դասի թեմայի ծավալուն պլան:
- Գրել փոքրիկ շարադրություն «Հովսեփ Էմինը» վերնագրով:
- Համեմատել Շ. Շահամիրյանի և Հ. Արղությանի ծրագրերը: Գտնել նմանությունները և տարբերությունները:
- Գրել կարծիք «Որոգայթ փառաց» կամ «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գրքի վերաբերյալ՝ պատկերացնելով քեզ՝ որպես այն ժամանակաշրջանի մարդ:
- Լրացնել T-աձև աղյուսակ՝ նշելով Շահամիրյանի ծրագրի դրական և բացասական կողմերը

Դրական	Բացասական

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով գործնական աշխատանքները հայող պատմության դասին նախատեսվում են կիրառել այս կամ այն թեմայի կամ ենթաթեմայի ուսումնասիրելուց հետո կիսամյակի ընթացքում գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման մակարդակն ամրագրելու կամ ուսումնական այլ հմտությունների որակը արտահայտելու համար:

Այսպիսով գործնական աշխատանքների կազմակերպման լավագույն մեթոդ է աշխատանք սկզբնաղբյուրներով, որը կարևոր միջոց է ուսուցումն ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարաձայնություններին այլև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել այդ հարցի շուրջ: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման գործում: Ուղղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութին՝ աշակերտը ունենում ՝ զարմանալու հարցադրումներ անելու, բացատրելու, քննարկելու, վերլուծելու և մեկնաբանելու հնարավորություն:

Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1 .Հ. Ղևոնդյան «Պատմության դասավանդման մեթոդիկա» , Երևան 2001թ

2. Հ Ղևոնդյան «Պատմության ուսուցչի բանավոր խոսքը ուսուցման պրոցեսում» Երևան 1984թ

3. Гузеев В. В. “Методы и организационные формы обучения” М, 2001

4. Гузеев В. В. “Педагогическая техника в контексте образовательной технологии” М. Нар. образование, 2001

5. Վ. Գյուլազյան Լ. Առուշանյան Մ. Գասպարյան «ՈՒսուցչի ուղեցույց տետր» Երևան 2009թ

6 .«Հանրակրթության պետական կրթակարգ Չափորոշիչներ ծրագրեր մեթոդներ» Երևան 2007թ

7. Կ. Լալայան «Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակներ» Երևան 2009թ

8. Համացանց

9. «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» Երևան 1991թ.

10. Ա. Ղուկասյան «Հայոց պատմություն. Ուսուցչի ձեռնարկ 8-9»